Ֆադեյ Սարգսյան-ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս

Մեր մտահոգությունները ամբողջովին կենտրոնացած են գիտական գործունեության արդյունավետության բարձրացման խնդրին



ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի առաջիկայում տեղի ունենալիք հերթական տարեկան ժողովին, որտեղ կքննարկվեն հանրապետությունում գիտության զարգացման հիմնախնդիրները, միտումներն ու հեռակարները, մեր ստորաբաժանումները զբաղվում են ինչպես ձեռք բերված արդյունքներով, այնպես էլ գիտության առջև ծագած ու ծագող խնդիրները արդյունավետ լուծելու վճռականությամբ:

Նախապես ուզում եմ շեշտել, որ ակադեմիան բազմիցս առաջարկություններ է ներկայացրել կառավարությանը գիտության ոլորտում այնպիսի բարեփոխումներ կատարելու վերաբերյալ, որոնք էապես կնպաստեն ինչպես երկրի էկոնոմիկայի, այնպես էլ գաղափարական, կրթական և մյուս ոլորտների գործունեության մակարդակի բարձրացմանը: Ընթացիկ տարում այդ նպատակին ուղղված ևս մի խնդիր ենք դրել մեր առջև՝ մշակել բարեփոխումների որոշակի հայեցակարգ: Կարծում եմ, որ շահագրգիռ նախարարությունների հետ քննարկումներից հետո այն կներկայացվի ՀՀ կառավարությանը, ԱԺ-ին և, օրենքի ուժ ստանալով ու գործողության մեջ դրվելով, կապահովի ցանկալի արդյունքներ: Նշեմ նաև, որ այդ խնդիրը պատշաճ մակարդակով լուծելու համար բացառված չէ, որ անհրաժեշտություն առաջանա գնալու զգալի վերափոխումների: Չէ՞ որ մեր գիտահետազոտական ինստիտուտներն ու կենտրոնները ձևավորման առումով և դրանից բխող ֆունկցիոնալ գործունեության տեսակետից համապատասխանում են նախորդ հասարակարգի պլանային, վարչատնտեսական և սոցիալ-քաղաքական կառուցվածքին: Մինչդեռ այսօր իրադրությունը միանգամայն այլ է: Փոխվել է տնտեսավարման ողջ գաղափարախոսությունն ու բնույթը, պլանային տնտեսության ընդերքում ծնված ինֆրակառուցվածքային իր առանձնահատկություններն ունեցող գիտական հաստատությունը, որի գործունեությունը գերազանցապես խասխված էր պետական-ֆինանսավորման հենքին, արդեն չի կարող արդյունավետ գործունեություն իրականացնել և պահպանել հասարակության զարգացումն ապահովող իր

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Մեր մտահոգությունները ամբողջովին կենտրոնացած են...

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առաջատար դերը: Հույսը դնել միայն դրամաշնորհների և օգնությունների վրա, կնշանակի հասարակական զարգացման գործընթացներում ստանձնել պասիվ, գոյատևողի դեր և անհաշվենկատ օգտագործել ժողովրդի մտավոր ներուժը: Այնպես, որ գիտական մտքի ռացիոնալ տեղաբաշխման ու օգտագործման պայմաններում միայն հնարավոր կդառնա ինչպես հասարակության զարգացման և առաջընթացի նոր մակարդակի ապահովումը, այնպես էլ առաջավոր երկրների գիտատնտեսական ներուժի մեջ ակտիվ և արդյունավետ ինտերգրումը: Այս ամենի հետ մեկտեղ, մեր գիտական հաստատությունների հինգաղարգացմանն ու ինքնակատարելագործմանը լրջորեն խոչընդոտում են համապատասխան օրենքների բացակայության հետևանքով առաջացած արհեստական պատնեշները: Գիտական հաստատություններին տալով ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ, փաստորեն նրանց զրկում են սեփական գիտական մշակումների շուկայական իրացման, հետևապես և ինքնազարգացման, ինքնակատարելագործման հնարավորություններից:

Ասածս հիմնավորելու նպատակով բերեմ այսպիսի մի օրինակ. մեր ակադեմիայի մանրէաբանության ինստիտուտը տարիներ առաջ պրոֆեսոր Երգնկյանի ղեկավարությամբ, մշակել է «Նարինե» սննդային հավելումը, որն օժտված է կենսաբանական բարձր ակտիվությամբ թե՛ ստամոքսային, թե՛ իմունային համակարգերի խախտված ֆունկցիաների կառավարման առումով և լայն կիրառում է գտել բժշկության մեջ ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում: Ճապոնիան այն լայնորեն օգտագործում է արդեն տասը տարուց ավելի: Մեր հանրապետությունում այսօր բազմաթիվ մեծ ու փոքր ձեռնարկություններ տնայնագործական եղանակով այս կաթնամթերքն արտադրում և վաճառքի են հանում, ըստ որում հաճախ լուրջ աղավաղումներով: Բայց ահա մանրէաբանության ինստիտուտը զրկված է իր սեփական արտադրանքը վաճառելու իրավունքից: Ավելին, «Աշտարակ-կաթ» ձեռնարկությունը պատրաստ է պայմանագիր կնքելու ինստիտուտի հետ նրանից մշտապես «Նարինեի» մերան ստանալու նպատակով: Եվ թեև դան հնարավորություն կտա բնակչությանն ապահովելու բարձրորակ մթերքով, իսկ ինստիտուտին կարգավորելու իր ֆինանսական դրությունը, գործող օրենքը բացառում է նման հանգամանքը: Նույն վիճակում են գտնվում մեր շատ ինստիտուտներ, որոնք ի զորու են լինելու ոչ միայն դրամաշնորհ շահողի, այլ նաև դրամաշնորհ տվողի դերում: Այնպես որ առաջիկայում լուրջ քայլեր ձեռնարկելու, այս հարցում արմատական շրջադարձ կատարելու խնդիր ունենք: Երկիրն անցել է շուկայական տնտեսավարման, հետևապես օրենքները պետք է նպաստեն դրա զարգացմանը, այլ ոչ թե խանգարեն:

Ակադեմիան ծրագրում է իր ինովացիոն գործունեությունը կենտրոնացնել առաջին հերթին պետական գերակայությունների ուղղությամբ կատարվող հետազոտությունների զարգացման վրա:

Անցած տարում, չնայած լուրջ դժվարություններին, մեզ հաջողվել է ամրապնդել ու զարգացնել միջազգային կապերը, առանց որի անհնար է ապահովել գիտության զարգացման մակարդակ: Ակադեմիայի համակարգի 354 գիտնականներ տարվա ընթացքում եղել են արտասահմանյան 40 երկրներում: Նրանցից 162-ը մասնակցել են գիտական միջոցառումների, 154-ը համատեղ գիտահետազոտական աշխատանքների, 38-ը բանակցությունների և քննարկումների: Կարևոր միջազգային գիտաժողովներ են կազմակերպվել նաև մեզ մոտ (Երևանում, Ծաղկաձորում, Բյուրականում, Գյումրիում), ընդգրկելով գիտության համարյա բոլոր ասպարեզները: Ակադեմիան անմիջական մասնակցություն ունի Ցեղասպանության 90-րդ տարելիցի, Մեսրոպյան գրերի 1600-ամյակին նվիրված միջոցառումների, կազմակերպման աշխատանքներում: Չեմ կարող հատուկ չանդրադառնալ Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի սոցիալ-տնտեսական ու բնապահպանական հիմնահարցերի հետ կապված աշխատանքների կարևորությանը: Այդ աշխատանքների վերահսկողությունը հանձնարարված է ակադեմիայի ղեկավարությամբ ստեղծված հանձնաժողովին: Մեծ երախտագիտությամբ ուզում եմ նշել ՌԴ գիտությունների ակադեմիայի մասնակցությունն այդ կարևորագույն խնդրի լուծմանը: Վերջերս մեծ դժվարությամբ հաջողվեց Սևան տեղափոխել ռուս բարեկամների կողմից տրամադրված և նորագույն սարքավորումներով հագեցած նավը, որ հնարավորություն կընձեռի հետայսու հետազոտությունները կատարել բարձր մակարդակով: Ի դեպ, ՌԴ գիտությունների ակադեմիայի հետ կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում մեր ակադեմիայի 36 գիտնականներ Ռուսաստանի գիտական կենտրոններում մասնակցել են համատեղ հետազոտությունների:

Ակադեմիան համապատասխան գործունեություն է ծավալել նաև գիտական այլ կենտրոնների հետ, արդյունքում ստանալով զգալի դրամաշնորհներ և դրանք ուղղելով միջազգային գիտաժողովների, սեմինարների, գործուղումների և այլ միջոցառումների կազմակերպմանը: Անցյալ տարի հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից ակադեմիային հատկացված 127 միլիոն դրամով մեզ հաջողվեց կատարել շենքերի տանիքների ու ջեռուցման համակարգի զգալի վերանորոգումներ:

Նպատակաուղղված աշխատանք է կատարվում գիտաշխատողների կազմը երիտասարդ կադրերով համալրելու ուղղությամբ: 77 մասնագիտությունների գծով ասպիրանտուրայում սովորում է 308 մարդ: Տարեկան 30-40 ասպիրանտ ու հայցորդ թեկնածուական ատենախոսություն են պաշտպանում: Համակարգում երիտասարդ մասնագետների թիվը հասնում է 777-ի, որոնցից 130-ը գիտական աստիճանով: Ակադեմիայի նախագահությունը վերջերս որոշում ընդունեց ուղղված երիտասարդ մասնագետների հետ տարվող աշխատանքի բարելավմանը, նրանց համար գիտական գործունեությամբ զբաղվելու անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Այսօր մեր մտահոգություններիը ամբողջովին կենտրոնացված են գիտական գործունեության արդյունավետության բարձրացման խնդրին: Ակադեմիան կառավարության հանձնարարությամբ մշակում է առաջարկություններ գիտական աշխատանքների արդյունքները առավել ճկուն և արդյունավետ կերպով հանրապետության զարգացմանն ուղղելու համար:

Ահա հիմնահարցերի և մտահոգությունների այն շրջանակը, որով մենք հավաքվելու ենք մեր տարեկան ժողովրդին, նպատակ ունենալով ամփոփել կատարված աշխատանքը և գործնական միջոցառումներ մշակել համակարգի առջև դրված դժվարին ու բարդ խնդիրները պատվով իրագործելու համար: